ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Բագրատ Բադալյանի գործուղման արդյունքների մասին

ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ
Բագրատ Բադալյան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ
Բելգիայի Թագավորություն՝ քաղաք Բրյուսել
2019 թվականի հունիսի 12-ից 14-ը

ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ
Եվրոպական Հանձնաժողով

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ
Մասնակցություն ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (ՀԸԳՀ) սահմանված բարձրագույն կանոնադրային մարմնի՝ Գործընկերության խորհրդի երկրորդ հանդիպմանը

ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

2017թ. նոյեմբերի 24-ին ստորագրված և միջանկյալ կիրառման մեջ մտած 2018թ. հունիսի 1-ին ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) շրջանակներում 2019թ. հունիսի 13-ին կայացել է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (ՀԸԳՀ) սահմանված բարձրագույն կանոնադրային մարմնի՝ Գործընկերության խորհրդի երկրորդ հանդիպումը: Խորհուրդը ստեղծվել է ՀԸԳՀ շրջանակներում և վերջինիս նպատակը Համաձայնագրի դրույթների կատարման վերահսկումն ու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկումն է:

Նիստի շրջանակներում երկու կողմերը իրենց պատրաստակամությունը հայտնեցին Արևելյան գործընկերության և վերանայված Եվրոպական հարևանության

քաղաքականության շրջանակներում ընդլայնել և խորացնել փոխադարձ համագործակցությունը:

Հանդիպման օրակարգի առաջին մասով անդրադարձ կատարվեց քաղաքական երկխոսության, բարեփոխումների, ժողովրդավարության, իրավունքի գերակայության, ՋԼՄ-ների ազատության և մարդու իրավունքների թեմաներին, Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը, տարածաշրջանային խնդիրներին (Սիրիա, Իրան, Ռուսաստան, Չինաստան, Թուրքիա) և այլն:

Այս համատեքստում ԵՄ-ն ողջունեց Հայաստանում 2018թ. դեկտեմբերին կայացած խորհրդարանական ընտրությունները և տեղեկացրեց, որ ԵՄ-ն և նրա անդամ պետությունները զգալիորեն նպաստել են ընտրությունների անխափան կազմակերպմանը: ԵՄ-ն վերահաստատեց իր պատրաստակամությունը սերտորեն համագործակցել ժողովրդավարական եղանակով ընտրված իշխանությունների հետ, խորացնել քաղաքական և տնտեսական հարաբերությունները Հայաստանի հետ:

Քննարկվեցին նաև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի և «Գործընկերության առաջնայնություններ» փաստաթղթի կիրարկման գործընթացը, ՀՀ-ԵՄ տնտեսական, առևտրային և ոլորտային համագործակցությունը, ՀՀ-ԵՄ մուտքի արտոնագրերի ազատականացման երկխոսության մեկնարկի հեռանկարները, ինչպես նաև Արևելյան գործընկերության տասնամյակի ամփոփումը և «20 արդյունք մինչև 2020թ.» փաստաթղթի կատարողականը:

Քաղաքացիական հասարակության հետ խորհրդակցությունների արդյունքում 2019թ. հունիսի 1-ին Հայաստանի կողմից ընդունված ՀԸԳՀ կիրարկման ճանապարհային քարտեզը ողջունվեց Խորհրդի կողմից՝ որպես երկրում առանցքային բարեփոխումների ամրապնդման կարևոր գործիք: Հայաստանը և Եվրամիությունը կշարունակեն սերտորեն համագործակցել առաջընթացի մշտադիտարկման և ՀԸԳՀ-ի հաջող կիրարկումն ապահովելու ուղղությամբ, այդ թվում՝ ԵՄ աջակցության միջոցով:

Գործընկերության խորհրդի կողմից նաև նշվեց, որ Հայաստան-Եվրամիություն Գործընկերության առաջնահերթությունները կձևավորեն Հայաստանին ԵՄ աջակցության գերակայությունները:

Խորհուրդը քննարկեց էներգետիկայի, տրանսպորտի, բնապահպանության և կլիմայի փոփոխության ոլորտներում համագործակցությունը, այդ թվում՝ Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերությունում Հայաստանի մասնակցությունը, 2019թ. փետրվարին Տրանսեվրոպական տրանսպորտային ցանցի դեպի Հայաստան ընդլայնումը, ինչպես նաև ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն կլիմայի համար» տարածաշրջանային նախագծի շրջանակներում համագործակցությունը: Այս համատեքստում ԵՄ-ն աջակցություն կտրամադրի այն առաջնային ենթակառուցվածքային

ծրագրերին, որոնց մասին Հայաստանի վարչապետը հայտնել էր Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժան-Կլոդ Յունկերին 2019թ. մարտին Բրյուսելում կայացած իրենց հանդիպման ընթացքում:

Խորհուրդը նաև ողջունեց 2019թ. մարտին մեկնարկած կրթության ոլորտի բարեփոխումների շուրջ երկխոսությունը: Քաղաքացիների շարժունակությունը և մարդկանց միջև շփումները բարելավելու նպատակով ԵՄ-ն և Հայաստանը շարունակելու են քաղաքացիների շարժունակության խթանումը մուտքի արտոնագրերի դյուրացման և հետընդունման մասին համաձայնագրերի միջոցով, ինչպես նաև պատեհ ժամանակին դիտարկելու են մուտքի արտոնագրերի ազատականացման շուրջ երկխոսության մեկնարկը՝ պայմանով, որ լավ կառավարվող և անվտանգ շարժունակության պայմաններն ապահովվեն:

Խորհուրդը ընդգծեց, որ ԵՄ ավելի քան 160 մլն եվրոյի աջակցություն է հատկացրել Հայաստանին 2017-2020թթ. համար և ԵՄ հավելյալ 25 միլիոն եվրո կհատկացնի Հայաստանին տրամադրվող աջակցության 2019թ. տարեկան գործողությունների ծրագրի շրջանակներում: Խորհուրդն ընդգծեց այդ ռեսուրսների՝ հնարավորինս արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը՝ առավելագույնի հասցնելու բարեփոխումների ազդեցությունը, ինչպես նաև տեսանելի ու շոշափելի կերպով բարելավելու քաղաքացիների կենսապայմանները:

Ի շարունակություն ս.թ. մայիսին կայացած Արևելյան գործընկերության 10-ամյակին նվիրված միջոցառումների՝ Խորհուրդն ընդգծեց Արևելյան գործընկերության «20 արդյունք 2020 թվականի համար» փաստաթղթով նախանշված նպատակներին հասնելու համար շարունակական աշխատանքի կարևորությունը:

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Բագրատ Բաղալյանը հանդես եկավ ելույթով, որով կարևորվեց տրանսպորտային ենթակառուցվածքների առաջնային ծրագրերում TEN-T ցանցերի ընդլայնումն ու կատարելագործումը: Նշվեց, որ միջազգային ֆինանսական հաստատությունների և պետական բյուջեի միջոցները կենտրոնացված են այդ գործողությունների վրա: Նախարարի տեղակալի կողմից հակիրճ ներկայացվեց ներկայումս իրականացվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի և Մ6 ճանապարհի վերակառուցման և բարելավման ծրագրերը, որոնք ֆինանսավորվում են Եվրոպական ներդրումային բանկի և Ասիական զարգացման բանկի կողմից:

Նշվեցին նաև TEN-T ցանցերի զարգացման համար կատարվող աշխատանքները, որոնք ուղղված են մասնավոր սեկտորից և հանրային մասնավոր գործընկերության միջոցով նոր ֆինանսավորման աղբյուրների ներգրավման հարցում:

Ելույթում անդրադարձ կատարվեց նաև ճանապարհային անվտանգության գործողությունների ծրագրի նախագծմանն ու ընդունմանը, ինչպես նաև ճանապարհային անվտանգության խնդիրների նույնականացմանը և դրանց համապատասխան լուծումների մշակմանը:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Բագրատ Բադալյան

17.06.2019թ.